կողմից, հետևաբար վերջիններս չեն կրում պատճառված վնասը վերականգնելու պարտականություն:

Նկատի ունենալով, որ հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ դրսևորել է պատշաճ ջանասիրություն, սակայն անձրևի՝ բացառիկ, անխուսափելի և անվերահսկելի լինելու հանգամանքով պայմանավորված՝ չի կարողացել բացառել գույքին վնաս հասցելու հնարավորությունը:

Փաստերի նման դասավորվածության պայմաններում դատարանը գտնում է, որ բացակայում է պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու հայցվորների կողմից մատնանշված 2-րդ հիմքը:

Գ) Որոշումը կայացվել է նման իրավասություն չունեցող անձի կողմից:

Պայմանագրի 8.15 կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

18.10.2023 թվականի «պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը» ստորագրվել է Երևանի քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Գրիգորյանի կողմից:

Երևանի քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խորեն Գրիգորյանի լիազորությունն անվավեր ճանաչված լինելու և/կամ վիճարկված լինելու վերաբերյալ որևէ ապացույց ներկայացված չլինելու և նման պահանջ ներկայացված չլինելու հանգամանքով պայմանավորված՝ դատարանն անհիմն է համարում Խորեն Գրիգորյանի՝ որոշումը կայացնելու իրավասություն չունենալու վերաբերյալ համահայցվորների ներկայացուցչի փաստարկը:

Ամփոփելով վերաշարադրյալը՝ դատարանը հանգում է եզրակացության առ այն, որ հայցվորի փաստարկներն ու պատճաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ պայմանագրի լուծման մասին ծանուցումն անվավեր ճանաչելու համար:

Վերոգրյալի հիման վրա՝ դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է կիրառված հայցի ապահովման միջոցներին, ապա նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից պետք է վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 07.11.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

4. Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ սույն քաղաքացիական գործով հայցվորը հայցադիմումը ներկայացնելիս վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ հոդվածներով՝ դատարանը՝

ՎՃՌԵՑ

1. «Խաչ-Արմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 07.11.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Ծանոթություն: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ «____» _____ 202 թ.

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**